ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2022 թվականի N 299-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի թիվ 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի թիվ 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 61 կետի պահանջով և հիմք ընդունելով Դիլիջան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 198-Ա որոշումը՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը /գոտևորման նախագծերը/ հաստատելու վերաբերյալ

որոշում եմ.

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը /գոտևորման նախագծերը/:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

26.10.2022

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 26

ք. Իջևան